„Արարատ" գրավաճառանոցի, № 4. 111 էջ. գինը 30 կ.։

— Նոյնը երկրորդ տարի. առաջին տպագրութիւն. Հրատարակութիւնոյն գրավաճառանոցի № 5. 211 էջ. գինը 50 կ. երկուսն էլ պատկերազարդ։

Նիկ. Սարգսեան.—Դասագիրք բնական պատմութեան հայոց մի դասեան դպրոցների համար։ Համաձայն եկեղեցական ծրագրի դպրոցների ուսումնական ծրագրի, Թիֆլիզ, տպ. Հերմէս. 1912. VII+168, գինը 50 կ պատկերազարդ։

— Գ. Էդիլեան.—Քննադատութիւն Ցիլլերի ձեւական աստիճանների, վարդապետ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի. 1912. 115 էջ. գինը 50 կ.

— Յովհաննէս Զրաբերդցի.—Մեռուս բառս. տպ. Ա. Ն. Տարաեի և Լ. Դ. Միրզայեանցի. 1912. 19 էջ. գինը 10 կոպ.։

— Վարդան Քամալեան (Խարբերդցի).—Ալէքսանդրապոլ. տպ. Շիրակ. 24 էջ. գինը 15 կ.

— Ադիսեանդր Առարատեան.—Երկու թուք կամ խեղճ սիրահարներ, անցկացած բան. երրորդ տպագրութիւն. Թիֆլիզ, տպ. Կուլտուրա. հեղինակի պատկերով. 64 էջ. գինը 20 կ.։

— Բանի մը խօսք (Սանասարեանի հեղափոխութեան առթիւ). Հրատարակութիւն ժողովրդային մասնախմբի Կարին. տպ. „Ցառաջ", 1912, I+9. գինը։

— Մահուրի Գէորգի գլխի անցքերը և խրատական երգերը. գրեց աշուղ Մահուրի Գէորգ Ղարարուլախցին. Առաջին գիրք. Թիֆլիզ. տպ. „Էպոքրանտս" 1912. 128 էջ. 50 կ.։

— „Պատանի". ալմանախ. IV (VI), Թիֆլիզ. տպ. Պրոգրէս, 1912. 64 էջ. գինը. 20 կ.։

— Ասպարէզ, գրական ժողովածու. գիրք Բ. կազմեց Նորդ. Ալէքսանդրապոլ. տպ. Շիրակ. 1912 32 էջ. գինը 10 կ.։

— Նոր առողջապահիկ. Հանրամատչելի առողջապահակ. Երկրաթաթեթեր. 1912. № 11։

— Քէ նորոսկ ոբ ոբեսոնեանի կրելիտնիխ ոզսոմոոտնոշենիյ ինստիտուտ Բ. Շիմմելպֆենգ. C. H. Б. типогр. А. Бенке. 1912 24 էջ. գինը ?

— Կանոնագրութիւն Թիֆլիզի Զուբալովի անուան ժողովրդական տան հայերէն լեզուով ներկայացուցիչներ կազմակերպող հայկական դրամատիկ խմբակցութեան. Թիֆլիզ, տպ. Հերմէս. 1912. 21 էջ. գինը ? Հայերէնը և ռուսերէնը նոյն տեսակում դէմ առ դէմ։

Ալլաշվերդո ջանց հէյզո սանոմզրոս ղոլիյնը գաբոնտ ֆոնոգրաֆ „նաբոլոս" 1912 ֆ. գամոլոմ դաստ. մելաՇՇոլոնս. 16 էջ. գինը 7 կ.։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

440 ԱՄԵԱՑ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

«Մշակ» թերթի էջերում մի քանի ամիս շարունակ կրկնւում է, թէ Յուբելեանական Թիֆլիզի Ցանձնաժողովը, որը, ինչպէս յայտնի է, ընտրւած է Թիֆլիզի բոլոր Հայ կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչների ժողովով, ինքնակոչ է և որ մամուլի մի մասը, ինչպէս „Մշակ", «Արօր», «Աղբիւր Տարազ» և հիմնարկութիւնից՝ Յուբելեանական դպրոցը չեն մասնակցել այդ ժողովներին և նա գիրգծումներ է գործել իր որոշումների մէջ։

Յուբելեանական Ցանձնաժողովը հասարակական կարծիքը մոլորեցնելից ազատ պահելու և թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար՝ պարտք է համարում յայտարարել, որ հասարակական ընկերութիւնների, լրագրների, դպրոցական հաստատութիւնների ներկայացուցիչների երկու ժողովներին էլ վերջիջեալ հաստատութիւնների պատգամաւորութիւնները ներկայ են եղել, մասնակցել են վիճաբանութիւններին և քէարկութիւններին, և ոչ մի բան նրանց կողմից չի արտայայտւած եղել այդ ժողովների իրաւասութեան և ձեռնհասութեան դէմ։ Միայն վերջին ժողովում «Մշակ»-ի և «Արօր»-ի կողմից կարդացւեց մի յայտարարութիւն, որով. նկատելով որ իրենց առաջարկութիւնը (այն է՝ գիւտերի տօնի ժամանակի սուտակը յանձնել մի ձեռնհաս յանձնաժողովի) ընդունւեց ընդհանուր ժողովի կողմից՝ յայտնում է՝

„Արդ ես լիազօրւած եմ ներկայ ժողովում «Մշակի» և «Արօրի» խմբագրութիւնների կողմից յայտարարելու, թէ այդպիսի մի տօնի խորհուրդ ոչ միայն արդէն ողջունւած և ողջունելի է մշակականութեան կողմից, այլ և սա պատրաստ է, այս տարի է եղել՝ թէ հրաբեկէ առաջիկայում, ամենաջերմ ջատագովն և մասնակիցը լինել գործին։ Միայն համաձայնով գործն արժանապէս տօնելի՝ երբ դա ձեռնհասորէն ստուգւած է՝ նա պէտք մնում է իր առաջարկութեան վրայ։ Նախ ձեռնհասութեամբ քննել ստուգել, և ապա տօնել։ Եթէ ժողովը նորից մերժէ այդ առաջարկը, այդ դէպքում լիովին խղճի բարգրութիւնները իրանք կատարումեն կը տան իրենց առաջարկին, և նախքան ստուգումը չեն մասնակցիլ տօնախմբութեանը"։

Ինչպէս պարզ երևում է այս յայտարարութիւնից, սպասելի էր, որ վիճելի հարցը լուսաբանւելուց յետոյ «Մշակն» ու «Արօրը» պիտի մասնակցեին ներկայ կազմակերպութեան գործունէութեանը։ Բայց չնայելով, որ թիւրիմացութիւնը լուսաբանւելուց այդ յայտարարութիւնից անմիջապէս մի քանի օր յետոյ նոյն իսկ «Մշակի» էջերում, այնուամենայնիւ, «Մշակն» ու «Արօրը», փոխանակ ըստ իրանց յայտարարութեան մասնակցելու տօնախմբութեան, ոչ մի քայլ չարին մեր գործունէութեան աջակցելու և ոչ մի առիթ չթողին մեր դէմ խոչընդոտներ շարունակելու։

Իսկ ինչ վերաբերում է „Աղբիւր Տարազի" խմբագրութեան և Յուլիսեան գպրոցին, նրանց կողմից դեռ մինչև այսօր էլ ոչ մի յայտարարութիւն չի եղել, թէ իրանք իրականում չեն համարում մեր Ցանձնաժողովի գոյութիւնը։

Գալով ժողովի որոշումներին, Ցանձնաժողովը պարտք է համարում յայտարարել, որ թեմիս ժամ. կառավարիչ ս. Եփրեմ եպիսկոպոսը ուրախութեամբ ընդունելով Ցանձնաժողովի պատուաւոր նախագահութիւնը, միևնոյն ժամանակ յայտնել է, որ ժամանակ չունենալու պատճառով ինքը ոչ մի ժողովի չի կարող մասնակցել և խնդրել է իրան ոչ մի նիստի չհրաւիրել։ Իսկ Ցանձնաժողովին ենթակայ բոլոր խնդիրները որոշել են կոլէգիալ հաստատութիւնների այն կարգաւ կանոնի հիման վրայ, որոնք ընդունւած են անհնութիւնք, այն է՝ ներկայ եղող անդամների ձայների առաւելութեամբ և շատ անգամ էլ միաձայն։ Որեմն „Մշակ"-ի կողմից մեզ վրայ բարդած մեղադրանքը, որպէս թէ Ցանձնաժողովի նիստերի մէջ գիրգծումներ են կատարել, հարամում ենք անտեղի, անհիմն և յիրիւրած միայն հասարակական կարծիքը մոլորեցնելու համար։

„Մշակի" իր՝ պաշտօնական, հրապարակով տրած յայտարարութիւնից յետոյ գործած մի այդպիսի վերաբերմունքը դէպի հասարակական մի վեհ գործ և դէպի հասարակութեան ընտրած Ցանձնաժողովը՝ թողնում ենք հասարակութեան գնահատութեան և դատաստանին։

Նախագահ բժ. Ար. Զարգարեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջին մասնաւոր հիւանդանոց
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՀԱՍԱՐԵԱՆԻ
Հիմնւած 1860 թ.

«606»-ի Ներարկումն բժշկական խորհրդակցութեամբ 11—12 մասամ.

Բ. Ա. ՆԱՀԱՍԱՐԵԱՆ 11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական հիւանդութիւնքներ։

Կ. Մ. ԶԻԿՈՎԱՆ 9—10 ժ. աչքերքին և նեարդային։

Զ. Ի ԲԱՐԱՆԱՍԵԱՆ 10—12 ժամ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց։

Ն Տ. Մալին 10—12 ժ., ականջի կոկորդի և քթի։

Ս. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ 11—12 ժ. որոթու, վենէրական, վիրաբուժութիւն և միզասերական։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 12—1 ժամ. ներքին, երեխայոց և ծաղկաւոր։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ 1—2 ժ., ներքին և երեխայոց։

(Կին-բժիշկ ԱԲՐՈՒՄՈՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ 12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.,

ԵՐԵԿՈՆԵՐ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ 6—7 ժամ.

Կին բժիշկ Մ. Լ. ՌԵՆԻԳԵՐ-ԱՐՇԵՎԱ 6—7 ժ. մանկաբարձութիւն կանանց և երեխայոց հիւ.։

Զ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆՑ 6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի. համախորհրդի (կոնսիլիումի) և օգտակար ցիպի համար տասնմեկ։

Հիւանդանոցի վերատեսուչ
Բժշկապետ՝ Բ. Նահասարդեան

1 0—104

ԸՆԴՈՒՐՈՒՄ ԵՄ

Մէկ կամ երկու

ԳԻԾԵՐՕԹԻԿՆԵՐ

Մինչև 13—14 տարեկ. հասակը

Տալիս եմ **ՃԱՇԵԼԻ** մաքուր կովի իւղով պատրաստած։

Հարցնել Կիրոչայա փողոցում № 18 տանը, տիկ. Մելիքեանին։